ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 7.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի
20 ապրիլի 2017թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Կ .Հ. Հովսեփյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 10 անդամներ:

1. Մանկավարժական պրակտիկաների ամփոփում:
/ զեկ. Ք.Օթարյան/
2. Կուրսային, ավարտական աշխատանքների կատարման ընթացքի քննարկում:
/ զեկ. Ա. Յուզբաշյան, Ա. Սիմոնյան/
3. Դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացի քննարկում՝ ակադեմիական ազնվության ապահովում:
/ զեկ. Մ. Զաքարյան/
4. Կրթական ծրագրերի պատասխանատուների հաշվետվություն:
/ զեկ. Կ. Հովսեփյան, Ա. Սիմոնյան/
5. Ուսումնագիտական գործընթացի իրականացում:
/ զեկ. Մ. Զաքարյան/
6. Ընդունելության մարքեթինգային գործընթացի քննարկում՝ համապատասխան աշխատաշուկայի ընթացակարգին
/ զեկ. Մ. Զաքարյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցներն անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը: Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց մանկավարժական պրակտիկայի ընդհանուր խմբի ղեկավար Ք. Օթարյանը: Նա ներկայացրեց, որ Ի/ԿՄ 3-րդ կուրսի ուսանողները մանկավարժական պրակտիկան անց են կացրել Իջևանի ավագ, թիվ 1 և թիվ 4 դպրոցներում: Պրակտիկան իրականացվել է պատշաճ մակարդակով: Պրակտիկայի արդյունքները գնահատելու համար ընդհանուր ղեկավարը կազմակերպել է բաց

պաշտպանություն: Ուսանողները պրեզենտացիաներով ներկայացրել են իրենց կողմից իրականացված ակտիվ պրակտիկայի արդյունքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Գ. Վ. Գուլակյանը, Ա. Վ. Ցուցուլյանը: Նրանք մասնակցել էին պրակտիկայի բաց պաշտպանությանը և նշեցին, որ պրակտիկան բավարար էր կազմակերպված:

ՈՐՈՇԵՑԻՆ- Պրակտիկայի արդյունքները գնահատել բավարար:

2. Օրակարգի երկրորդ հարցը ներկայացրեցին "Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության" ամբիոնի վարիչ Ա. Ցուցուլյանը և "Ինֆորմատիկա" մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու Ա. Սիմոնյանը : Նրանք նշեցին, որ ԻԿՄ IV կուրսի ուսանողների հետ ավարտական աշխատանքների քննարկում տեղի է ունեցել "Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության" ամբիոնի թիվ 7 նիստում: Ավարտական աշխատանքները կատարված են 70 տոկոսով: ԻԿՄ III կուրսի կուրսային աշխատանքների հետ կապված զեկուցողը նշեց, որ կազմված է ուսանողների և կուրսային աշխատանքի ղեկավարների հանդիպման գրաֆիկ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Գ.Վ. Գուլակյանը, Հ.Հ. Քամալյանը: Նրանք նշեցին, որ ուսանողները ըստ կազմված գրաֆիկի հանդիպում են իրենց ղեկավարներին և ստանում են իրենց անհասկանալի հարցերի պատասխանները:

ՈՐՈՇԵՑԻՆ- Գնահատել բավարար ավարտական և կուրսային աշխատանքների կատարման ընթացքը:

3. Խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց օրակարգի երրորդ հարցը՝ կապված դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացում ակադեմիական ազնվության հետ: Նա նշեց, որ ֆակուլտետում իրականացվում են փոխադարձ դասալսումներ, որը ֆակուլտետում դասավանդող երիտասարդ դասախոսների համար հանդիսանում է փորձի փոխանակման յուրահատուկ միջոց: Գնահատման գործընթացում ակադեմիական ազնվության պահպանման համար նշեց, որ բոլոր քննությունների ժամանակ կկազմվեն մասնագիտական խմբեր, որոնք ներկա կլինեն բոլոր քննություններին, այդպիսով ապահելով գնահատման գործընթացում ակադեմիական ազնվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Վ. Ցուցուլյանը, Ք.Վ. Օթարյանը, Կ.Հ. Հովսեփյանը: Նրանք կողմ արտահայտվեցին քննական հանձնաժողովների ստեղծմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ-Եզրափակիչ քննությունները իրականացնել համապատսխան քննական հանձնաժողովներով:

4. Օրակարգի չորրորդ հարցի առաջին մասը ներկայացրեց <<Ինֆորմատիկա համակարգչային գիտություն>> կրթական ծրագրի պատասխանատու Ա. Սիմոնյանը: Նա նշեց, որ <<Ինֆորմատիկա համակարգչային գիտություն>> կրթական ծրագրի ուսումնական պլանից հանվել են հետևյալ առարկաները.

1. Մանկավարժություն և հոգեբանություն -4 կրեդիտ
2. Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի դասավանդման մեթոդիկա -3 կրեդիտ
3. Արտադրական /մանկավարժական/ պրակտիկա -4 կրեդիտ

Ընդամենը՝ 11 կրեդիտ

Հանված կրեդիտների թվով կատարել ընդհանուր մասնգիտական կրթամասի մոդուլների կրեդիտների ավելացում՝ համապատասխան ժամաքանակով կամ ներմուծել նոր մասնագիտական առարկաներ:

Ա.Սիմոնյանը ներկայացրեց, որ խորհրդակցել է ամբիոնի աշխատակազմի հետ և կատարել է հետևյալ փոփոխությունները.

Վերոնշյալ առարկաների փոխարեն ավելացվել են հետևյալները

1. Արտադրական պրակտիկա մանկավարժականի փոխարեն-4 կրեդիտ,
2. Կրիպտոգրաֆիայի մաթեմատիկական հիմունքներ 32ժ դասախոսություն,32ժ գործնական, 4 կրեդիտ
3. WEB ծրագրավորում 32ժ դասախոսություն,16ժ գործնական, 3 կրեդիտ

Օրակարգի չորրորդ հարցի երկրորդ մասը ներկայացրեց <<Քարտեզագրություն, կադաստրային գործ>> մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու Կ. Հովսեփյանը: Զեկուցողը մատնանշեց, որ խորհրդակցել է ամբիոնի աշխատակազմի հետ և որոշվել է ՔԿԳ կրթական ծրագրում Երկրաչափական նիվելիրացում, թեոդոլոտային և մենզուլային հանույթ առարկան (4 կրեդիտ) փոխարինել ´´Ինժեներային գրաֆիկաներ-1´´(4 կրեդիտ) առարկայով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- ,,Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության՛՛ ամբիոնի վարիչ Ա.Վ. Ցուցուլյանը: Նա նշեց, որ կատարված փոփոխությունները կնպաստեն համապատասխան մասնագիտությունների զարգացմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Կատարված փոփոխությունները ներկայացնել ուսումնական վարչություն հաստատելու նպատակով :

5.Օրակարգի հինգերորդ հարցը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Գիտխորհրդի նախագահը նշեց, որ դասապրոցեսի անհրաժեշտ նախապայմաններից մեկը դա ուսումնագիտական միջոցառումների կազմակերպումն է: Կա անհրժեշտություն շարունակել այն գիտական զեկուցումների շարքը, որոնք կազմակերպվում էին առաջին կիսամյակում: Զեկուցողը կոչ արեց դասախոսներին նույնպես կարդալ զեկուցումներ և այդպիսով ներգրավել ուսանողներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Գ.Վ. Գուլակյանը, Ա.Վ. Ցուցուլյանը, նշելով, որ ուսանողներին տրվել են գիտական զեկուցումների թեմաներ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Իրականացնել գիտական զեկուցումներ թե դասախոսների և թե ուսանողների կողմից:

6.Օրակարգի վեցերորդ հարցը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա նշեց, որ այս ուստարվա ընթացքում ԵՊՀ ԻՄ-ի աշխատակազմի կողմից իրականացվել են այցելություններ մարզի ավագ դպրոցներ և ավարտական դասարաններ, ներկայացրել են մեր բուհը, նրա մասնագիտությունները: Ըստ նախնական վիճակագրության ավարտող դպրոցականների մեջ մեծ թիվ են կազմում նրանք, ովքեր ցանկություն են հայտնել իրենց ուսումը շարունակել մայր բուհի մասնաճյուղում, մասնավորաբար մեր մասնագիտություններում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Կ. Հովսեփյանը, Ա. Ցուցուլյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ-Նպաստել մասնաճյուղի ուսանողների ներգրավածությանը շրջանավարտների շրջանում մասնաճյուղը ներկայացնելու պրոցեսին:

ՆԱԽԱԳԱՀ **Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Կ. Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ**